Ընդունված է Թալինի ավագ դպրոցի մանկավարժական խորհրդի 20--թ. ----------ի նիստում:

Հաստատում եմ՝
Թալինի ավագ դպրոցի տնօրեն՝
_____ /Ա. Կնյազյան/

Արձանագրություն թիվ – 1

Digitally signed by KNYAZYAN ANNA 5403700137
Date: 2022.09.20 12:12:26 AMT

# ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

## ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի ավագ դպրոցի 2022-2023 ուսումնական տարվա

- **Բաժին 1.** Ընդհանուր և հոսքային կրթության կենսագործում:
- **Բաժին 2**. Աշխատանք մանկավարժական կադրերի հետ: Որակավորման բարձրացում:
- **Բաժին 3.** Ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպումը:
- **Բաժին 4.** Ներդպրոցական վերահսկողության համակարգ:
- **Բաժին 5.** Աշխատանք ծնողների հետ:

*Թալին 2022*

## ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆ
## ԲԱԺԻՆ 1
## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ՀՈՍՔԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՄ

| N | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը | Պատասխանատու | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1. | Սահմանել վերահսկողություն պարբերաբար ուշացումների և անհարգելի բացակայությունների նկատմամբ, ժամանակին կանխել դրանք. անհրաժեշտության դեպքում առաջնորդվել օրենքով սահմանված կարգով: | տարվա ընթացքում | Տնօրեն,կրթ.աջակց. գծ.տնօրենի տեղակալ, դասղեկներ, դաստ. աշխ.կազմակերպիչ | |
| 2 | Աշխատանք տանել դժվար դաստիարակվող երեխաների և նրանց ծնողների հետ: | ուս. տարվա ընթացքում | կրթ.աջակց. գծով տնօրենի տեղակալ, դասղեկներ,դաստ.աշխ. կազմակերպիչ | |
| 3 | Ուսուցման գործընթացի իրականացմանը մասնակից դարձնել ծնողներին, ծնողական և հոգեբարձուների խորհուրդներին: | ուս. տարվա ընթացքում | տնօրեն | |
| 4 | Դժվար առաջադիմող աշակերտներին, ըստ նրանց ընդունակությունների ու հետաքրքրությունների, ընդգրկել արտադպրոցական խմբակներում, ակումբներում, սեկցիաներում: | ուս. տարվա ընթացքում | Ուսումն.աշխ. գծով տնօրենի տեղակալ, դասղեկներ | |
| 7 | Դպրոցում աշակերտների ընդունելու-թյունը իրականացնելու համար դպրոցի տնօ-րենի հրամանով ստեղծել հասարակական հիմունքներով աշխատող մանկավարժների խորհրդատվական խումբ: | օգոստոս | տնօրեն, ուս.աշխ.գծով տնօրենի տեղակալ | |
| 8 | Կոմպլեկտավորել դպրոցի հոսքային դասարանները, երեխաներին ծանոթացնել դպրոցի ներքին կարգապահական կանոն-ներին, գործող ռեժիմին, ինչպես նաև իրենց իրավունքներին ու պարտականություններին: Ստեղծել ջերմ մթնոլորտ ուսումնական գործընթացը բարեհաջող սկսելու համար: | օգոստոս-սեպտեմբեր | տնօրեն, կրթ.աջակց.գծով տնօրենի տեղակալ | |

# ԱՇԽԱՏԱՆՔ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿԱԴՐԵՐԻ ՀԵՏ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ
## ԲԱԺԻՆ 2

| N | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը | Պատասխանատու | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1. | Գրադարանում ստեղծել մեթոդական բաժին, այն հարստացնել մեթոդական, մասնագիտական գրականությամբ, ինչպես նաև առարկայական ծրագրերով և չափորոշիչներով: | օգոստոս-սեպտեմբեր | ուս. գծով տնօրենի տեղակալ, գրադարանավար | |
| 2 | Տարեսկզբին հրավիրել առարկայական մասնախմբի նախագահների խորհրդակցություն, պլանավորել նրանց աշխատանքային տարեկան գործունեությունը՝ հանրակրթական հաստատությունում ուսումնադաստիարակչական աշխատանքի արդյունավետ կազմակերպման և առարկայական դասավանդման արդյունավետության բարձրացման ուղղությամբ: Հանձնարարել՝<br>ա/ առարկայական մասնախմբերում քննարկել, ամբողջական տեսքի բերել ուս. տարվա առարկայական մասնախմբի աշխատանքային պլանը և ներկայացնել հաստատման, | օգոստոս-սեպտեմբեր<br><br>օգոստոս | տնօրեն, ուս.գծով տնօրենի տեղակալ<br><br>տնօրեն | |
| 3. | բ/ ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչով և նախասիրականով սահմանված ժամաքանակի տնօրինման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում, | օգոստոս | ուս. գծով տնօրենի տեղակալ | |
| 4. | Իրականացնել էլեկտրոնային համակարգերում /emis.am, դասագրքերի շրջանառու հիմնադրամի կայք և այլն/աշակերտների և ուսուցիչների տվյալների գրանցում, էլեկտրոնային մատյանների ստեղծում | սեպտեմբեր | Տնօրեն , տնօրենի տեղակալ, օպերատոր | |
| 5. | Տարվա ընթացքում ուշադրության կենտրոնում պահել էլեկրոնային մատյանում ուսուցիչների գրանցումները, ծնողական ժողովների ընթացքում իրազեկել նաև ծնողներին ՝ իրենց երեխաների առաջադիմությանը մշտապես հետևելու անհրաժեշտության մասին: | Ողջ տարվա ընթացքում | Տնօրեն, տնօրենի տեղակալ | |
| 6. | գ/ ստուգել ուսուցիչների առարկայական թեմատիկ պլանները, տալ համապատասխան հանձնարարություններ: Թեմատիկ պլաններում առարկայի չափորոշչային պահանջների համապատասխանության և պլանի լիարժեքության մասին ներկայացնել հաշվետվություն / գրավոր/ տնօրինությանը: | սեպտեմբերի 1-10 | ուս. գծով տնօրենի տեղակալ | |
| 7. | Անցկացնել առարկայական մասնախմբերի ղեկավարների սեմինար խորհրդակցություն: Լսել մասնախմբերի նախագահների հաշվետվությունները կատարած աշխատանքների մասին, քննարկել, տալ համապատասխան հանձնա-ռարություններ, անհրաժեշտության դեպքում աշխատանքային պլաններում կատարել փոփոխություններ: Քննարկել մեթոդամանկավարժական հրատապ հիմնահարցեր: | ամիսը մեկ անգամ | տնօրեն, ուս.գծով տնօրենի տեղակալ | |
| 8. | Կատարել դասալսումներ՝ միջին հաշվով շաբաթական 13-16 ժամ / տնօրեն 4-5, փոխտնօրեն՝ 7-8, առարկայական մասնախմբի նախագահ՝ 2-3/: Դասալսումները կատարել | ուս. տարվա ընթացքում | տնօրեն, տնօրենի տեղակալներ, մասնախմբերի | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | նպատակային և նույն օրը քննարկել ուսուցչի հետ՝ դասալսման տետրում գրելով անհրաժեշտ դիտողություն հանձնարարություններ: Դիտողություններն ու հանձնարարությունները գրանցել ուսուցչի աշխատանքային գործունեությունը բնութագրելու համար հատկացված «Դիտողությունների գրանցման» մատյանում: | | ղեկավարներ , դասղեկներ | |
| 9. | Ուշադրության կենտրոնում պահել սկսնակ ուսուցիչներին: Նրանց համար կազմակերպել մեթոդամանկավարժական օգնություն: | ուս. տարվա ընթացքում | ըս.գծ. տնօրենի տեղակալ, առարկայական մասնախմբերի նախագահներ | |
| 10. | Մանկավարժական խորհրդի նիստի և մեթոդմիավորման նիստերի ժամանակ ուսուցիչներին ներկայացնել կամավոր ատեստավորման ընթացակարգը, ֆինանսական առավելությունները, որ ստանում է այն հաղթահարած ուսուցիչը: Շահագրգռել ուսուցիչներին մասնակցել կամավոր ատեստավորման հնարավորինս շատ: | Օգոստոս-սեպտեմբեր | Տնօրինություն | |
| 11. | Ուսուցիչների հետ անցակցնել քննարկում-հանդիպում՝ տարակարգի շնորհման նոր կարգի վերաբերյալ, ապահովել առարկայական և մեթոդական բազա՝ ուսուցիչներին հավուր պատշաճի տարակարգի համար դիմելու նախապատրաստվելու համար: | Օգոստոս-սեպտեմբեր | Տնօրինություն | |
| 12. | Քանի որ դպրոցը 2022-23 ուստարում միացել է ԿՏԱԿ-ի կողմից կազմակերպվող բացակա ուսուցիչ ունեցող դպրոցներում հեռավար դասեր անցկացնելու համար մենթոր դպրոցների ծրագրին, դպրոցում անցկացնել սեմինար , ծանոթացնել ուսուցիչներին հեռավար դասավանդման մեթոդաբանությանը, գործիքակազմին, նախապատրաստել հեռավար դասեր անցկացնելու համար շենքային և տեխնիկական անհրաժեշտ պայմանները: | Օգոստոս-սեպտեմբեր | Տնօրինություն, մենթորներ | |
| 13. | Ապահովել ուսուցման արդյունքների ստուգման և գնահատման տասը միավորանի սանդղակի անցման մեթոդական ցուցումների կիրառումը: Անհրաժեշտության դեպքում ստեղծել թեմատիկ հարցաշարեր /հարցաշարերի բանկ/ և հաճախ աշակերտների գիտելիքները ստուգել նաև համակարգիչների միջոցով: կիսամյակի ընթացքում դպրոցում առնվազն երկու անգամ բոլոր առարկաներից կազմակերպել թեմատիկ ստուգումներ՝ տնօրինության ներկայացուցչի կամ առարկայական մասնախմբի նախագահի մասնակցությամբ: | Տարվա ընթացքում | տնօրինություն, առարկայական մասնախմբի նախագահ, ուսուցիչներ | |
| 14. | Հարստացնել դպրոցի լաբորատորիաները: Հետևել, որպեսզի դասը հագեցած լինի զանազան ուսումնադիտողական նյութերով, լաբորատոր սարքավորումներով՝ կարևորելով տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների կիրառումը: | ուս. տարվա ընթացքում | տնօրինություն | |
| 15. | Դասարաններում պարբերաբար կազմակերպել բանավեճ, քննարկումներ, կլոր սեղաններ, գիտագործնական կոնֆերանսներ և այլն, որոնք էլ ավելի կնպաստեն աշակերտների ինքնակրթության և հոգևոր մտքի զարգացմանը: | ուս. տարվա ընթացքում | Տնօրենի տեղակալներ, մասնախմբերի նախագահներ, ուսուցիչներ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 16. | Ուսուցիչների համար կազմակերպել դասախոսություններ, սեմինարներ: Այդ նպատակով հրավիրել բարձրորակ մասնագետներ այլ հաստատություններից, բուհերից, ԿԶՆԱԿ-ից, գիտահետազոտական ինստիտուտներից, ԳԹԿ-ից: | ուս. տարվա ընթացքում | տնօրեն | |
| 17. | Պահանջել, որպեսզի յուրաքանչյուր ուսուցիչ ուսումնական տարվա ընթացքում հանդես գա առնվազն մեկ մեթոդական-մանկավարժական, առարկայական բնույթի զեկուցումով:Այն քննարկել առարկայական մասնախմբերում: | ուս. տարվա ընթացքում | տնօրեն, մասնախմբի նախագահ | |
| 18. | Ուսումնասիրել հմուտ ուսուցիչների առաջավոր փորձը և տարածել դպրոցում: | մշտապես | տնօրեն, ուս. գծով տնօրենի տեղակալ, մ/միավորումներ | |
| 19. | Մանկավարժական խորհրդում կարդացվելիք զեկուցումներ: | ուս. տարվա ընթացքում | տնօրեն, ուս. գծով տնօրենի տեղակալ | |
| 20. | Կազմակերպել կոնսուլտացիոն պարապմունքներ աշակերտներին քննությունների նախապատրաստեու համար: | մայիս 2023թ. | տնօրեն, ուս. գծով տնօրենի տեղակալ | |
| 21. | Ժամանակին կազմել և հաստատել քննական հանձնաժողովներ, փակցնել քննական կարգացուցակը՝ քննությունները սկսվելուց առնվազն 10 օր առաջ: | մայիս 2023թ. | տնօրեն, ուս. գծով տնօրենի տեղակալ | |
| 22. | Ուսուցիչներին հաղորդակից դարձնել գիտության և մանկավարժության նորագույն նվաճումներին: | ընթացքում | տնօրինություն | |
| 23. | Ուսուցիչներին ժամանակին ծանոթացնել ՀՀ կառավարության որոշումներին, ՀՀ կրթության և գիտության նախարարության հրամաններին, հրահանգներին և այլ նորմատիվ փաստաթղթերին: | ուս. տարվա ընթացքում | տնօրեն | |

## ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

## ԲԱԺԻՆ 3

| N | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը | Պատասխանատու | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | Ուսուցիչներին ժամանակին ապահովել ուսումնական ծրագրերով և երաշխավորված մեթոդական ուղեցույցներով: | օգոստոս սեպտեմբեր | Տնօրենի տեղակալներ, առարկայական մասնախմբեր | |
| 2 | Ուսումնական առարկաների դասավանդումը բարելավելու նպատակով ուսուցումը կազմակերպել հնարավորության դեպքում կաբինետային համակարգով, հարստացնել դպրոցի ուսումնանյութական բազան, օգտագործել առկա տեխնիկական միջոցների ողջ հզորությունը: | ուս տարվա ընթացքում | տնօրեն | |
| 3 | Աշխատանք տանել կաբինետները և դասարանները անհրաժեշտ նյութերով ու սարքա- | օգոստոս սեպտեմբեր | տնօրեն,դասղեկներ, լաբորանտներ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | Վորումներով կահավորելու ուղղությամբ: | | | |
| 4 | Ուսուցիչների համար կազմակերպել համակարգչային դասընթացներ, նրանց սովորեցնել համակարգչով աշխատել: | ուս տարվա ընթացքում | տնօրեն, ինֆորմատիկայի ուսուցիչ, օպերատոր – տեխնիկ | |
| 5 | Աշխատանքներ տանել աշակերտների մասնագիտական կողմնորոշումը ճիշտ նպատակաուղղելու համար: | ուս տարվա ընթացքում | կրթակ.աջակցությ. գծով տնօրենի տեղակալ | |
| 6 | Սովորողների կրթության որակը բարձրացնելու նպատակով կատարել նպատակային դասալսումներ, արդյունքները քննարկել, առաջարկությունները ու դիտողությունները գրանցել նաև ուսուցիչների աշխատանքային գործունեությունը բնութագրող «Դիտողությունների և առաջարկությունների գրանցման» մատյանում: | ուս տարվա ընթացքում | տնօրեն, ուս, գծով տնօրենի տեղակալ | |
| 7 | Կատարել առարկայական ուսումնասիրություններ. արդյունքները քննարկել առարկայական մասնախմբերի նիստերում. տնօրինության խորհրդակցություններում. մանկավարժական խորհրդում կամ կոլեկտիվի ժողովում: | ուս տարվա ընթացքում | տնօրեն, ուս, գծով տնօրենի տեղակալ մասնախմբերի նախագահներ | |
| 9 | Կազմակերպել առարկայական շաբաթներ, միամսյակներ<br>ա/ կազմակերպել ցերեկույթներ, բաց դասեր,<br>բ/ լույս ընծայել պատի թերթեր,<br>գ/ հրավիրել մասնագետներ տարբեր ուսումնական հաստատություններից: | ուս տարվա ընթացքում | Տնօրենի տեղակալներ մասնախմբերի նախագահներ, ուսուցիչներ | |
| 10 | Անցկացնել դպրոցական օլիմպիադաներ: առարկայական օլիմպիադաներին նախապատրաստվել ուս տարվա սկզբից: | Դեկտեմբեր-հունվար | տնօրեն, տնօրենի տեղակալներ, մասնախմբերի նախագահներ | |
| 11 | Հայտնաբերել օժտված երեխաներին, տալ առարկայական խոր և կայուն գիտելիքներ, մղել նրանց ստեղծագործական, որոնողական աշխատանքի: | ուս տարվա ընթացքում | տնօրեն, փոխտնօրեններ, մասնախմբերի նախագահներ, ուսուցիչներ | |
| 12 | **ԴԱՍՂԵԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ**<br>Օգնել դասղեկներին կազմելու դաստիարակչական աշխատանքների աշխատանքային պլանը և ներկայացնել հաստատման: | սեպտեմբերի սկիզբ | կրթակ.աջակցությ. գծով տնօրենի տեղակալ | |
| ա/ | Դասղեկներից պահանջել աշխատանքային պլանի հիմքում ամրագրել հետևյալ դրույթները.<br>- Ստեղծել դասարանական ամուր կոլեկտիվ:<br>- Աշակերտներին տալ հայեցի դաստիարակու-թյուն, նրանց մեջ արթնացնել ազգային արժանապատվություն և հպարտություն:<br>- Դաստիարակության հիմքում դնել հանրակրթական դպրոցի շրջանավարտի նկարագրի պահանջները: | ուս տարվա ընթացքում | տնօրեն, տնօրենի տեղակալներ, դասղեկներ | |
| բ/ | Շաբաթը մեկ անգամ անցկացնել դասղեկի ժամ և այն ծառայեցնել երեխաների բազմակողմանի դաստիարակության և մանկական առողջ կոլեկտիվի ձևավորման նպատակին: | ուս տարվա ընթացքում | կրթակ.աջակցությ. գծով տնօրենի տեղակալ | |
| գ/ | Հետևողական աշխատանքի միջոցով հնարավորինս նվազեցնել անհարգելի բացակայությունները: | ուս տարվա ընթացքում | Տնօրեն, կրթակ.աջակցությ. գծով տնօրենի տեղակալ, դասղեկներ | |
| դ/ | Կիսամյակը 1-2 անգամ հրավիրել դասարանական ծնողական ժողով: Ամուր հիմքերի վրա | ուս տարվա ընթացքում | Տնօրենի տեղակալներ, | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | դնել աշակերտ-դպրոց-ընտանիք կապը: Ծնողների համար կարդալ մանկավարժական թեմաներով զեկուցումներ: | | դասղեկներ | |
| ե/ | Յուրաքանչյուր դասարանում ստեղծել ծնողխորհուրդ /բաղկացած 3-5 հոգուց/, ապահովել ծնողխորհրդի մասնակցությունը ուսումնական գործընթացի կազմակերպմանը: | սեպտեմբեր | կրթակ.աջակցությ. գծով տնօրենի տեղակալ, դաստ. աշխ. կազմակերպիչ, դասղեկներ | |
| զ/ | Սահմանել բաց դռների օր, ապահովել ծնող-ուսուցիչ կապը: | ուս տարվա ընթացքում | տնօրեն, կրթակ.աջակցությ. գծով տնօրենի տեղակալ, դասղեկներ | |
| 13<br>ա/ | **ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ**<br>Հետևողական աշխատանք տանել աշակերտների գեղագիտական դաստիարակության գործի բարելավման ուղղությամբ: | ուս տարվա ընթացքում | տնօրեն, կրթակ.աջակցությ. գծով տնօրենի տեղակալ , դաստ. աշխ.կազմակերպիչ, դասղեկներ | |
| բ/ | Սովորողների օգնությամբ ձևավորել շենքի միջանցքներն ու կաբինետները, կազմակերպել գեղարվեստական օլիմպիադաներ, համերգներ: | ուս տարվա ընթացքում | տնօրեն, կրթակ.աջակցությ. գծով տնօրենի տեղակալ | |
| գ/ | Կանաչապատել դասասենյակները ու միջանցքները: Ստեղծել վահանակներ: | սեպտեմբեր | կրթակ.աջակցությ. գծով տնօրենի տեղակալ դաստ. աշխ.կազմակերպիչ | |
| 14<br>ա/ | **ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ**<br>Սովորողների ֆիզիկական դաստիարակության բարելավման նպատակով հնարավորության պայմաններում հարստացնել մարզական գույքով: | սեպտեմբեր-հոկտեմբեր | տնօրեն տնտես. գծով, տնօրենի տեղակալ | |
| բ/ | Դպրոցական բուժքրոջ միջոցով պարզել աշա-կերտների առողջական վիճակը, ստեղծել ֆիզկուլտուրայի հատուկ խմբեր, հետևել պարապմունքների անցկացմանը: | սեպտեմբեր | կրթակ.աջակցությ. գծով տնօրենի տեղակալ | |
| գ/ | Կահավորել բուժկաբինետը, ձեռք բերել անհրաժեշտ դեղամիջոցներ: | սեպտեմբեր | տնտ. գծով տնօրենի տեղակալ, դպր. բուժքույր | |
| դ/ | Պարբերաբար կազմակերպել աշակերտների կողմից մարզական նորմատիվների հանձնում: | սեպտեմբեր 2013թ.-մայիս 2014թ. | տնօրեն, ֆիզկուլտուրայի ուսուցիչներ, բուժքույր | |
| ե/ | Անցկացնել միջդասարանական, միջդպրոցական մրցումներ: Այն կազմակերպել բարձր մակարդակով, նախապես իրազեկ դարձնել դասղեկներին և աշակերտներին: | հոկտեմբեր 2013թ.-մայիս 2014թ. | կրթակ.աջակցությ. գծով տնօրենի տեղակալ, ֆիզկուլտուրայի ուսուցիչներ, դասղեկներ | |
| զ/ | Ուժեղացնել դպրոցական բուժանձնակազմի աշխատանքների վերահսկողությունը, ստեղծել բժշկական միջոցառումների իրականացման առավելագույն հնարավորություններ / բուժ-ստուգումների ժամանակին անցկացում, հակաէպիդեմիոլոգիական աշխատանք/: | ուս. տարվա ընթացքում | տնօրեն | |
| է/ | Խստորեն վերահսկել անվտանգության և սանիտարական կանոնների պահպանմանը: | մշտապես | տնօրեն, դասղեկներ, լաբորանտներ, ուսուցիչներ | |
| ը/ | Պարբերաբար հետևել ուսումնական գործ- | մշտապես | ուս. գծով տնօրենի | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | ընթացի հիգիենային, պահպանել դասացուցակների կազմման և տնային աշխատանքների ժամաբաշխման անհրաժեշտ պահանջները: | | տեղակալ | |
| թ/ | Ուսումնական տարվա սկզբին և վերջում մանկավարժական խորհրդի նիստերում լսել դպրոցական բուժքրոջ հաշվետվությունը՝ աշակերտների առողջական վիճակի և բուժական միջոցառումների իրականացման արդյունքների մասին: | սեպտեմբեր մայիս | տնօրինություն, /բուժքույր/ | |
| լ/ | Բուժքրոջ միջոցով անցկացնել զրույց բարձր դասարանների սովորողների օրվա ռեժիմի, անձնական հիգիենայի մասին: | ուս. տարվա ընթացքում | բուժքույր | |
| խ/ | Ուսումնական տարվա ընթացքում կազմա-կերպել «Առողջության օր»: Դպրոց հրավիրել բժիշկներ՝ տարբեր մասնագիտությունների գծով: Կազմակերպել զրույց-զեկուցումներ աշակերտների շրջանում: | ուս. տարվա ընթացքում | տնօրեն, կրթակ.աջակցությ. գծով տնօրենի տեղակալ, բուժքույր | |
| 15 | **ՈՒԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ** | | | |
| ա. | Կազմակերպել հանդիպումներ Հայրենական մեծ պատերազմի վետերանների, հայկական բանակի հրամանատարների, Արցախի ինքնապաշտպանական մարտերի մասնա-կիցների հետ: | ուս. տարվա ընթացքում | զինղեկ, պատմության ուսուցիչներ | |
| բ. | Այցելություն Հայրենական մեծ պատերազմում, Արցախի անկախության, Հայաստանի սահ-մանների պաշտպանության համար զոհված մարտիկների հուշարձաններին: | սեպտեմբեր մայիս | կրթակ.աջակցությ. գծով տնօրենի տեղակալ, զինղեկ, դասղեկներ | |
| գ. | Անցկացնել « Քաղաքացիական պաշտպա-նության օրը դպրոցում» միջոցառումը: Աշխատանք տանել ոչ ռազմականացված խմբավորումների հետ: | մշտապես | տնօրեն, զինղեկ | |
| 16 | | | | |
| ա. | <u>Աշխատանքային դաստիարակություն</u>: Դպրոցամերձ հողամասի մշակման և ծառերի խնամքի աշխատանքները կատարել աշակերտ-ների միջոցով, սեր արթնացնել դեպի աշխատանքը: | ուս. տարվա ընթացքում | ուսուցիչներ | |
| բ. | Աշակերտների ուժերով կազմակերպել դպրո-ցում աճեցվող ծաղիկների խնամքի գործը: Հոգ տանել, որպեսզի ծաղիկներով ու կանաչ բույ-սերով կահավորեն կաբինետները, միջանցք-ներն ու սրահները: | ուս. տարվա ընթացքում | կրթակ.աջակցությ. գծով տնօրենի տեղակալ, դասղեկներ, դաստ. աշխ. կազմակերպիչ | |
| 17 | **ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ** | | | |
| ա. | Օգնել գրադարանավարին կազմելու և հաս-տատման ներկայացնելու տարեկան աշխա-տանքային պլանը: | օգոստոս-սեպտեմբեր | տնօրեն, կրթակ.աջակցությ. գծով տնօրենի տեղակալ | |
| բ. | Դպրոցի հնարավորություններից ելնելով՝ հարստացնել գրադարանային ֆոնդը: Վերանո-րոգել գրադարանային ֆոնդում եղած դասա-գրքերն ու գրքերը: | ուս. տարվա ընթացքում, մշտապես | տնօրեն, գրադարանավար | |
| գ. | Կազմակերպել միջոցառումներ նշանավոր և հիշարժան տարելիցների վերաբերյալ: | ուս. տարվա ընթացքում | գրադարանավար | |
| դ. | Աշակերտներին բաժանորդագրել մանկա-պատանեկան ամսագրերին և թերթերին: | ուս. տարվա ընթացքում | գրադարանավար, դասղեկներ | |
| ե. | Ստեղծել թեմատիկ քարտարաններ, ղեկա-վարել դպրոցի ընթերցանությունը: | ուս. տարվա ընթացքում | գրադարանավար | |
| զ. | Դասագրքերով ապահովել աշակերտներին, մշակել համապատասխան փաստաթղթեր: | սեպտեմբեր | տնօրեն, գրադարանավար | |

# ՆԵՐԴՊՐՈՑԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ԲԱԺԻՆ 4

| N | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը | Պատասխանատու | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | Յուրաքանչյուր շաբաթվա վերջում վերլուծել շաբաթական պլանները.<br>ա/ Բացահայտել աշխատանքում տեղ գտած թերությունները:<br>բ/ Քննարկել հաջորդ շաբաթվա աշխատանքային ծրագրերը: | ուս. տարվա ընթացքում | տնօրեն | |
| 2 | Ուսումնական տարվա սկզբից ունենալ ուսուցիչների բացակայությունների հաշվառման մատյան: | ուս. տարվա ընթացքում | կրթակ.աջակցությ. գծով տնօրենի տեղակալ | |
| 3 | Հետևել, որ դասաժամերի բացթողումները լրացվեն լրացուցիչ պարապմունքների միջոցով: | մշտապես | կրթակ.աջակցությ. գծով տնօրենի տեղակալ | |
| 4 | Ուսումնական տարվա սկզբից կատարել աշխատանքի բաժանում որոշակի դարձնելով յուրաքանչյուր աշխատանքի շրջանակները: | օգոստոսի վերջ | տնօրեն | |
| 5 | Ստուգել և հաստատել ծրագրային նյութերի թեմատիկ պլանավորումները: | սեպտեմբերի սկիզբ | տնօրեն, ուս.գծով տնօրենի տեղակալ | |
| 6 | Յուրաքանչյուր ամսվա վերջին քննարկել սովորողների հաճախումների հարցը: | մշտապես | տնօրեն, կրթակ.աջակցությ. գծով տնօրենի տեղակալ | |
| 7 | Ստուգել լաբորատոր և գործնական աշխատանքների կատարման վիճակը բնագիտական առարկաներից: | հոկտեմբեր ապրիլ | ուս. գծով տնօրենի տեղակալ | |
| 8 | Ստուգել տարբեր առարկաներից տրված ուսուցողական, կիսամյակային գրավոր և գործնական աշխատանքների քանակը և որակը: Արդյունքները քննարկել մանկավարժական խորհրդի նիստում: | կիսամյակի վերջում | տնօրենի տեղակալներ, մասնախմբերի ղեկավարներ | |
| 9 | Ստուգել ուսումնական ծրագրերի կատարողականը և արդյուքները քննարկել: | դեկտեմբեր-ապրիլի սկիզբ | տնօրեն, տնօրենի տեղակալներ, մասնախմբի ղեկավարներ | |
| 11 | Ուսումնասիրել դասղեկների կատարած աշխատանքը: Արդյունքները քննարկել: | ուս. տարվա ընթացքում | կրթակ.աջակցությ. գծով տնօրենի տեղակալ | |

# ԱՇԽԱՏԱՆՔ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

## ԲԱԺԻՆ 5

| N | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը | Պատասխանատու | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | Հրավիրել դասարանական ծնողական ժողովներ: | սեպտեմբեր | տնօրենի տեղակալներ, դասղեկներ | |
| 2 | Նախապատրաստել ընդհանուր ծնողական ժողով և քննարկել դպրոցի առջև ծառացած համատեղ լուծման ենթական հարցեր: | ուս. տարվա ընթացքում | տնօրեն, ծնողխորհրդի նախագահ, դասղեկներ | |
| 4 | Պլանավորել ծնողական խորհրդի աշխատանքները: | սեպտեմբեր | տնօրեն, ծնողխորհուրդ | |
| 5 | Ապահովել դպրոցի և ծնողների համատեղ գործունեությունը սովորողների ուսուցման ու դաստիարակության բարելավման գործում: | ուս. տարվա ընթացքում | տնօրեն, | |
| 6 | Ծնողներին մասնակից դարձնել սովորողների արտադպրոցական, դաստիարակչական աշխատանքներին: | մշտապես | կրթակ.աջակցությ. գծով տնօրենի տեղակալ | |